

ՀՐԷԱՆԵՐԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼՈՒԾԻ ՏԱԿ

Գրեց՝ Մ. ՏԷՐՊԷՏԷՐԵԱՆ

ԱՎԱՌԱԿ այն բազմապիսի նամակներն են, որ կան հայ եւ հրէայ ցեղերու պատմութեանցը մէջ, ինչպէս հարածանք, տարազրութիւն, կոտորած, անհայրենիք եւ աստանդական թափառում աշխարհի ամէն հովերուն ու հոսանքներուն ենթակայ, շատ քիչեր կան մեր մէջ, որ հետաքրքրուած ըլլան հրէաներուն կեանքովը, անոնց Պաղեստինէն դաղթեցին ղերջ:

Ամէնքս ալ դպրոցին մէջ սորված ենք Արքաճամն ու Իսահակը, Դաւիթն ու Սողոմոնը մինչեւ Հերովդէս ու Յիսուս, քայց այնուհետեւ կարծես հրէայ ազգը դադրած է գոյութիւն ունենալէ եւ մեզմէ ոչ ոք հետաքրքրուած է գիտնալու, թէ ինչպէ՞ս երկար դարեր ապրած է ասիական այդ պատմական եւ քաղաքակրթուած ցեղն քրիստոնեայ եւրոպայի լուծին տակ:

Եւ սակայն որչափ հալածուած ու բռնաբարուած ենք մենք քրիստոնեայ ըլլալնուս պատճառաւ, նոյնչափ եւ աւելի խիստ շարքուած ու ստուած են անոնք քրիստոնեայ չըլլալուն համար... Որչափ դատապարտելի են մեր թշնամիները՝ ասիական բարբարոս եւ վայրի ժողովուրդներ, կրկնապէս դատապարտելի են հրէայ զազութիւնը խոչտանդոցներն, որովհետեւ անոնք իբր թէ քաղաքակրթուած եւ Քրիստոսի քարոզած սիրովը տոգորուած եւրոպացիներ էին:

Հրէից պատմութիւնը լի է արիւնտա էջերով եւ շատ մը եւրոպացի քրիստոնեայ իշխաններ սեւէ կերպով վար չեն մնար Թիմուրէնկէն կամ ձինկիլիանէն՝ անդթութեան հայեցակէտով: Նպատակս չէ ամբողջ հրէական պատմութիւնը գրել ամսաթերթի մը էջերուն մէջ, քայց հետաքրքիր է անշուշտ ծանօթանալ եւրոպայում ապրած մեծանուն հրէաներու կեանքին եւ սոհասարակ՝ քրիստոնեաներու

գրացնութեան մէջ՝ անոնց ներքին կենցաղին եւ ունեցած սովորութեանցը հետ:

Թարօ Փրանսացի պատմաբանը մանրամասնօրէն ուսումնասիրած է այդ կեանքը եւ հրատարակած մի քանի հետաքրքրական պատմութիւններ, որոնց մէջ ընթերցողը կրնայ գտնել շատ մը օրինակելի գրուածներ հրէական ուշիմութեան եւ անյողգող դնաւորութեան:

Կ'արժէ գիտնալ այն պատճառներն, որ մղեցին հրէան ապրելու «Կեթթօր»*) կեանքը: Կ'արժէ ուսումնասիրել այդ փակուած թաղերու մէջ ապրելու դատապարտուած ժողովուրդի հոգեկան ողբերգութիւնն, ըլլայ Սպանիոյ թէ Փրանսայի, Գերմանիոյ թէ Հոլլանտայի կամ Լեհաստանի մէջ:

ԺՊ դարուն Լեհաստանի եւ Ռուսիոյ մէջ հրատարակուած են բազմաթիւ գիրքեր երբայերէն եւ նամանաւանդ եէզիչերէն**) լեզուներով, որոնք կը ներկայացնեն Կէրքօ-ի կեանքն իր ամէն կողմերով, ծաղրելի թէ ստորնացուցիչ, բանաստեղծական կամ խորհրդաւոր:

Հրէայ ժողովուրդի վիճակն աշխարհի վերայ շատ լուրջ խնդիր մըն է եւ ներքին չէ անոր վրայ գրել թշնամութեամբ, խեղաթիւրումներով կամ դառնութեամբ:

Ոչ հրէասէր եւ ոչ հակահրէայ ըլլալու պէտք կայ անպատճառ՝ անոնց պատմութիւնն անաչառօրէն ուսումնասիրելու համար: Այդ

*) Եւրոպական քաղաքներու մէջ գտնուած հրէական թաղերն, ուր հրէաներէն զատ ոչ ոք կը բնակէր եւ որոնցմէ զուրս բնակութիւն հաստատելն արգելուած էր անոնց:

**) Գաւառաբարբառ մը խառնուրդ երբայերէնի եւ գերմաներէնի, որ կը գործածուի Գերմանիոյ եւ Լեհաստանի հրէաներու կողմէ: